

ՏԱՅ ՍԿԱՆՈՒՏ

ԿԻՍՍՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

Վարիչ-խմբագիր՝ ԿԱՐՕ Պ. ՈՒՇԱԳՂԵԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻԻ 8

16 ՓԵՏՐՈՒԱՐ 1920

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՎՃԱՐԵՑԷՔ ՁԵՐ ՊԱՐՏՔԸ ՀԱՅ ԲԱՆԱԿԻՆ

Բուզեական պահանջներու ամենակարեւորը ամենաանյետաձգելին եւ նուիրականն է հայ բանակի հանդէպ մեր ունեցած ՊԱՐՏՔԸ:

Ինչքան ալ եսասէր, անտարբեր ըլլայ անհատ մը, չը կրնար արդարացնել իր անտարբերութիւնը պարտականութեան մը հանդէպ որ իր կեանքին, իր գոյութեան իր պատուին, իր ազգային հպարտութեան եւ փառքին պատնէշն ու զօրավիզն է:

Բանակը ազգի մը զրահն է չորս կողմէն իր դէմ յարուած նեանքուն: Ան է որ կը պարտադրէ ազգերուն յարգել ուրիշ ազգերը, ճանչնալ անոնց իրաւունքը:

Քաղաքակիրթ ազգ մը ըլլալ չը բաւեր եթէ չը կայ բիրտ՝ բայց արդար բռունցքը՝ այդ քաղաքակիրթութիւնը պաշտպանելու համար:

Իրաւունքի տէր ըլլալ ինքնին ուժ մըն է եւ սակայն միեւնոյն ատեն եթէ չը կայ ֆիզիքական ոյժ մը այդ բարոյական ուժը պաշտպանելու համար, ոչինչ կ'արժէ այն: Մին առանց միւսին միշտ պիտի ձախողի:

Արդար իրաւունք մը արդարութեան բանակով մը կարելի է պաշտպանել: Անիրաւութիւնը հովանաւորող բանակի մը թշնամին ինքն իսկ է:

ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԿԸ ԳԵՐԱԳՈՅՆ ԻՐԱՒՈՒՆԵՒԻ ԵՒ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿՆ Է: Ան է որ պիտի վաւերացնէ մեր անկախութեան արժանի ազգ մը ըլլալը, ան՝ պիտի ապահովէ մեր տնտեսական իրաւունքները, ան մեր ճակտէն պիտի սրբէ ստրկութեան մուրը եւ մեր ընտանեկան պատիւը պիտի ապահովէ:

Անով է որ մեր շուշան աղջիկներուն ամբոթութիւնը եւ մեր պատանիներու ճակատներու միւռոնը անաղարտ պիտի մնան եւ այդ ճակատները պիտի համբուրուին ընտանիքի ծերունի նահապետին օրհնութիւնէն վերջ: Այդ բանակին ուժովը միայն շտեմարաններուն մէջ պիտի լսուին հայ Հայաստանի ազատ քաղաքացիին բրտիքովը օծուած ոսկեթոյր հասկերը: Եւ անոր թեւերուն տակ մեր հայրենի կրկիրը պիտի նուիրուի խաղաղ աշխատանքի, ապահովութիւնը պիտի իշխէ հոն՝ քաջալերելով արուեստն ու գիտութիւնը:

Ինչքան քաղցր եւ նուիրական է ունենալ ապահով պզտիկ բոյն մը այս բնդարձակ աշխարհի վրայ. հապա որքան քաղցրագոյն է ունենալ հայրենիք մը նոյն պայմանի տակ ուր, փստահօրէն գիտես թէ բուկդ է ինչ որ կը ցանես ու կը հնձես, գիտես թէ դուն բու անձիդ տէրն ես, բու ընտանիքիդ պատիւը նուիրական եւ ապահով է, բու օճախդ անձեռմխելի եւ դուն բու տեղդ ու բու խօսքդ ունիս ազգերու շարքին մէջ: Այ մէկ բանի կարելի է գերադասել այս գանձը...

Եւ ասոնք գերազանցապէս պիտի պարտինք հայրենիքի կրկաթէ ցանկապատին՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԿԻՆ:

Հայ քաղաքացի վճարէ՛ այդ բանակին բու պարտքը, որ գերեզմանիդ մէջէն չը լսես բու զաւակներուդ ստրկութեան շղթաներուն ձայնը, եւ բու աղջիկներուդ բռնաբարութիւնը չ'արատաւորէ բու շիրիմդ:



ԱՒԱՐԱՅՐԻ ԴԻԻՑԱԶՆԵՐԸ

ԴԻԻՑԱԶՆԱՄԱՐՏԸ



ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐԵՆԵՐՈՒՆ

Հերոսամարտին խնջոյքը շեփորուած էր:

Մարտիկները հոգեվառուած գունդագունդ կը դիմէին դէպի Աւարայր, փնջող արիւծաբաշ երիվարներու վրայ աշտանակուած...:

Զրադաշտի աստուածը նակատած էր հայուն բրիստոնեայ Աստուծոյն դէմ:

Կռուի շեփորը հնչեց...

Արեաց գունդը պատնիշացած Վարդանի շուրջ, գրոհ տուաւ բիւրերու բանակին դէմ...

Ցեղին դիւցազնական ոգին խոյացաւ դէպի զոհարերութեան բարձունքը...:

Հայրենիքի սիրով բոցավառ պողպատէ կուրծքերու բախումը՝ թնթացուց Շաւարշանի երկնակամարը... եւ Վարդանի Աստուածը հպարտացաւ իր փառքին համար շատրուանուած արիւնէն:

Ցեղին վէս նակատը չը խոնարհեցաւ ստրկութեան բազինին առջեւ... մահը թառեցաւ՝ արհամարհանքով փակուած անոր կոպերուն վրայ միայն՝ հոն մնունելու համար...:

Աւարայրի ծաղիկները, բոսորագոյն տառերով արձանագրեցին, ինկած բաջերուն կտակները, աւանդելու համար զանոնք ապագայ հայորդիներուն...:

եւ այսօր դարերէ վերջ, այդ աւանդին սրտառուչ ստանձնումը կը տօնէ Հայ Ազգը...
Փա՛ռք ցեղին անշէջ ոգիին...

Օ Կ Ա Ո Ւ Տ Ի Կ Ե Ա Ն Ք

Տ. ԶԱԻԷՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՔԱՐՈՁԸ

25 Յունիսար Իերայի երրորդութիւն եկեղեցիին մէջ խօսուած՝ սկառտներու երգման վարարողութեան առթիւ, ուր գեղեցկօրէն պատկերացուած է սկառտական ոգին: Սոյն քարոզը նոյնութեամբ գրի առած է մեր համակրելի աշխատակից Պ. Վահրամ Փափազեան:

Ամէնքս ալ մեծ յուզմունքով տեսանք այս 60ի չափ պատանիները, որ եկան այստեղ եւ Հայուն Դրօշակին եւ Աւետարանին առջեւ երդում ըրին հաւատարիմ մնալ Աստուծոյ, ծառայել հայրենիքին եւ գործել իբր պարտականութեան զիտակից մարդ, օգնելով ուրիշներուն իբր արի եւ վեհանձն մարդ՝ հնազանդի սկառտական օրէնքներուն: Թերեւս անոնց այս երգման արարողութիւնը շատերու վրայ դպրոցական հասարակ հանդէսի մը տպաւորութիւնը թողուց: Ես այնպէս չեմ նրկատեր. մենք սովորութիւն ըրած ենք իրերը դուրսէն դատել, առանց անոնց ներքինին թափանցելու: Ահաւասիկ պատանեկութեան մէկ մասը երդում կ'ընէ ըլլալ հաւատարիմ իր պարտականութեանը մէջ, կեանքին մինչեւ վերջը: Անոնք խտիր չպիտի դնեն ոչ աղքատի եւ ոչ հարուստի, ոչ մեծի եւ ոչ փոքրի միջեւ, այլ պիտի հասնին հո'ն ուր որ օգնութեան պէտք կայ, առանց հաշիւի, առանց յետին միտքերու: Այս երդուեալները ոչ միայն անհատները կը յիշեն, այլ նա'եւ հայրենիքը: Անոնք երբէ'ք առանձին չպիտի ապրին, այլ ուրիշներու հետ. մի միայն իրենց կազմակերպութիւններուն համար չպիտի գործեն, այլ բոլոր անհատներուն հաւասարապէս: Անոնք պիտի ըլլան պարկեշտ եւ պատուաւոր քաղաքացիներ, իբր հայրենիքի քաղաքացի՝ պիտի ըլլան պարկեշտ, իբր զինուոր՝ պիտի ըլլա հաւատարիմ հայրենիքին: Անոնց՝ մեր ամէնուս ներկայութեանը ըրած երդումին մէջ հագուստի, զարդարանքի, վագելու, ցատկելու խօսքը չի կայ. անոնց երդումն է, ամբողջապէս սեղծել քարոյական մթնոլորտ մը եւ հոն պիտի ապրին, ի գլուխ հանելով այն ամէն պարտականութիւններն զորս իրենց հայրենիքը եւ Աստուածը կը պարտադրէ:

Յանդուզն կերպով իրենց ձեռքը Սրբ. Աւետարանին վրայ դնելով կ'երդնուն Աստուծոյ: Ասոնց մէջ պատիկներ ալ կան, որոնք

յանդուզնօրէն յառաջ կը նետուին ըսելով. «Մենք ալ պիտի օգնենք»: Շատ մը ուխտեր կ'ըլլան միշտ, բայց այս պարտնները որոշ ուխտերով կը ներկայանան: Քաջալերական է անոնց այս ընթացքը: Մեր շուրջը կը տեսնենք այնպիսի մոլութիւններ, որոնք այս պարտններուն հետ կ'ուզեն քայել: Բայց անոնք ինքնաբերաբար երես կը դարձնեն զիրենք շրջապատող գէշ մթնոլորտին եւ կ'ըսեն. «Մենք գործ չունինք այդ ախտերուն հետ, այլ ընդհակառակը պիտի ծառայենք մարդկութեան իբր պատուաւոր եւ պարկեշտ մարդիկ»: Մի կարծէք որ այս երիտասարդական յանդուզն քայլ մըն է եւ վաղը պիտի մոռցուի: Ես այս չեմ ընդունիր: Ես կը հաւատամ որ այս երդումը պիտի բանդակուի անոնց բոլորին մէջ: «Հաւատարիմ ընթացք մը ունենալ եւ կատարեալ կարգապահութեամբ ապրիլ» Գիտէի թէ՛ այս ստրկութեան դարերը անագին ազդեցութիւն գործած են. յարգանքի պակասը մեր մէջ, թերեւս այսքան տարուան ստրկութեան արդիւնքն է. զիրար չենք սիրած: Ահա՛ սկառտները կ'երդնուն ըլլալ կարգապահ մարդ եւ զիտակից՝ իրենց գործերուն մէջ: Ուրեմն իրենց կեանքը ժամացոյցի պէս պիտի լարեն եւ մինչեւ մահ նոյն ուղղութեամբ պիտի ապրին: Ի՛նչ գեղեցիկ խոստում մեր մաս մը զաւակներու կողմէ: Որքան ուրախ պիտի ըլլայինք եթէ մեր որբերէն մինչեւ մեծերը, բոլոր մեր դպրոցականները ընէին նոյն երդումը:

Մենք այս սկառտներու վրայ մինչեւ այսօր նայած ենք իբր մարմնամարզիկներ, իբր բացօդի կեանքի նուիրւողներ: Կը տեսնէ՛ք. անոնց երդումին մէջ այդ բանը չի կայ. անոնք կ'երդնուն առողջ հոգի պատրաստել, անոնք զիտեն թէ առողջ հոգին, առողջ մարմնոյ մէջ կը գտնուի, հետեւաբար կ'ընեն առօրեայ մարզանքներ: Ըսուեցաւ թէ՛ մեր երիտասարդութեան մեկ մասը միայն ըլլայ սխառտ, մեկն կարծեցիկնք թի՛ լմանչ, աղջիկ՝ լեռները պիտի ելլեն, մեկ վրա-



Իգլիտի կորովի առաջ. Ստեփաննոս արքեպիսկոս իր արյուրէ վերադարձին Պարտիզակի մէջ իր առաջին պատարագէն վերջ նկարուած, սխառտներով եւ ժողովուրդէն շրջապատուած:

նի սակ պիտի պատկին, եւ ըսինք թե՛ պե՛տ չի աղջիկները երբան: Բայց տեսա՛ք, շեքի՛ք ականց երդուեր. Ինչո՞ւ մեր աղջիկներն աչ նոյն բարձր ոգիով, նոյն բարձր ուխտերով եւ երդումներով չներկայանան հոս, դրօշակին, Սրբ. Աւետարանին առջեւ: Որքա՛ն կարեւոր է այս. ահա՛ դրական կեանք մը որ զսպանակի մը պէս պիտի պրկէ անհատական եւ ազգային յոռի ունակութիւնները: Մեր հայերը ազատ թողած են իրենց զաւակները եւ ատոր համար մեր զաւակները, մանչ թէ՛ աղջիկ, փողոցները կը սլքտկան աղտոտութիւններու մէջ: Այն բոլոր ազգերը որ Վե՛ժ են, առողջ զատիարակութեան միջոցաւ հասած են այդ բարձրութեան. անոնք գիտեն իշխել ուրիշներու եւ կառավարել ինքզինքնին: Անշուշտ գիտէք թէ՛ ամերիկացի կիներ առանձին կը համբորդեն, աշխարհիս չորս կողմերը կը պտտին — : Մենք զարգացած ենք կ'ըսենք ու կ'աւելցնենք թէ՛ եթէ մեր աղջիկը առանձին դուրս ելլէ, պիտի արբւի, պիտի խանգարուի: Մենք սկառուտական ոգիով լի զարգացումի մը պէտք ունինք, եթէ այս ոգին մեր դպրոցներէն, որբանոցներէն, ընտանիքներէն, բոլոր խաւերէն ներս մտնէ, բոլորովին նոր կեանք մը կ'ստանայ մեր ազգը: Ահա դուրսէն շարժում մը կուգայ եւ կ'ըսէ. «բերէք ձեր զաւակները մեզի, անո՛նք ուխտ պիտի ընեն եւ հոգւով ու մարմնով առողջ

պիտի ըլլան»: Մենք ասոնց պէտք ունինք. ապագային շատ պիտի զոյանք որ մեր պարսակաւորեան մեզ զհսակցարար դերացած ենք: Անգլիացիները մէջ կարելի է համբել զաւակներու թիւը. մեր մէջ շատ քիչ են: Անգլիացիները 15 հատ կը մեծցնեն, հագւով եւ մարմնով առողջ, որոնք պատրաստ են ծառայելու արժանապէս իրենց հայրենիքին: Մինչ մեր երկու զաւակ ունեցողը տակն ու վրայ կ'ըլլայ, ըսելով «կարելի չէ մեր զաւակները զրսպել . . .»: Հայրը իր զաւակը ազատ կը թողու, ու երբ կէս գիշերէն վերջ իր երիտասարդ զաւակը տուն կը վերադառնայ, չհարցնէր իսկ թէ՛ ո՞ր էր մինչեւ այն ատենները: Այս երիտասարդները մոլութիւնները տեսնելով կը ստիպուին միասին երթալ ու առողջ հոգիներ կը թունաւորեն: Այս երգման արարողութիւնը ինձ առիթ մը կուտայ ըսելու թէ՛ որքա՛ն հիացումով կը դիտեմ այս ուղղութեան յառաջացումը մեր մէջ: Գոհ եմ որ ամէն թաղի մէջ պատանեկութիւնը սիրով նուիրուած է այս ազգօգուտ շարժումին: Երջանիկ պիտի ըլլայի եթէ մանկապարտէզէն մինչեւ բարձրագոյն վարժարանները տարածուէր այս ոգին: Ոչ թէ մարմնամարզը, ձեւը, այլ բարոյականը կարեւոր է, որպէսզի ապագայ սերունդը ըլլայ աւելի պատուաւոր, աւելի պարկեշտ, իր կեանքը նուիրելով ընտանիքին եւ հայրենիքին:



Գահիրէի (եգիպտոս) սկաուտներու առաջին երգման արարողութիւնը
ու Գրօշակի բարեսը 1914ին

Կը մաղթեմ որ այն Աստուածը որուն
առջեւ երդուրնցար, զօրացնէ ձեզ որ կարե-
նաբ փորձանքներէ հեռու մնալ. զօրացնէ՝ որ
կարենաք բոլոր երդումներնիդ կատարել, կա-
րենաք ծառայել ձեր հայրենիքին, ու երջան-
կութիւնը ունենաք զայն վայելելու: Աստուած
ձեզ օգնէ եւ միշտ զօրավիգ ու օգնական ըլ-
լայ:

ԱՆՅԵԱԼ ՅՈՒՇԵՐԷՍ

Հայ Սկաուտներուն

Վայրկեանի պահանջը ժողովրդի բոլորի հո-
գեկան լարումը, անակնկալ բռու սողանցքը,
կ'արդարացնեն կարգ մը ձեռնարկներ, զորս
գուցէ ապագայ տրամագրութիւնը դատա-
պարտէ, և սակայն յաճախ դէպքը պէտքին
հետեւանքն է:

Յղացումներով օժտուած պատանիին փառ-
քըն ու ապագան անոր հետքերուն կը հետին,
որովհետեւ անիկա գիտէ առիթները շահագոր-
ծել և նոյն իսկ ստեղծել զանոնք:

Երանի՛ այն պատանիին որ այդ ուղղու-
թեամբ կը պատրաստուի:

Պատմենք նմոյշ մըն ալ հայ մանուկներուն
յղացումներէն, առիթ տալով հայ պատանիին
որպէս զի մտածէ, մխրճուի կեանքին զաղա-

նիքներուն մէջ. փնտռէ հոն լոյսը, ու երբ հը-
րապարակ գայ՝ ջահը արդէն ձեռքին մէջ բռո-
նած ըլլայ:

Օրերը յղի են, ամէն օր Մշոյ դաշտի գիւ-
ղերէն սայլերով Մուշ կը բերուին սպաննուած
հայ դիակներ, կառ սվարութեան ցոյց տալու և
ապա տանիլ թաղելու համար: Զանոնք սպաննող
զազաններուն չափ կառավարութիւնն ալ կը
հրճուէր հայ դիակներուն տեսքովը, ասոր հա-
մար էր որ պարտաւորացած էր հայ գիւղա-
ցին որպէս զի բոլոր սպանուածները Մուշ բեր-
ուին, կառավարութեան ցոյց տրուին և ապա
թաղուին, այլապէս խստիւ կը պատժուէին:

Ամէն արհեստ կը ձգտի դէպի զարգացում,
դէպի կատարելութիւն՝ իւր քննութեամբ ու
բազմադէպ փորձերով: Մեր թշնամիներն ալ,
իրր ոճրագործ արհեստաւորներ, ինչպէս մսա-
գործներ, դահիճներ, ելն. ևլն, իրենց արհես-
տը կատարելագործելու համար գիտական տուիք-
ներու կը կարօտէին, և ինչ աւելի զիրենք
պիտի առաջնորդէր իրենց նպատակին քան հա-
յուն անմեղ դիակները, . . .

Ծանր է մթնոլորտը, ճնշող ու ահաւոր,
ամէն օր հայ փոքրիկները կ'երթային կառա-
վարութեան դուռը, հասկնալու համար օրուան
սպանուածին գիւղն ու անունը և կուգային
մեզի լուր տալու, արձանագրուելու համար:

Ծարունակական դէպքերը խենդեցնող հան-
գամանք ունէին, որմէ ինչպէս ազատուելու



Առանայի հայ սկաուտներու պետ Պ. Միրայէլ
Իշլէմէճեան, որուն գործունէութիւնը
լաւագոյն արդիւնք կը խոստանայ:

ճար ու հնար չէինք կրնար գտնել ու կը տան-
ջուէինք:

Առաւօտ մը, Մելքոնն ու Եղիշէն կառա
վարութեան դուռը կ'երթան, կը տեսնեն սպա-
նուածին դիակը, վերադարձին, խորհրդակցած
բայց առանց ունէ վճռականութեան յանգելու
մեղի եկան:

Ես թէև հասակակից էի իրենց, սակայն
յանձին իմ, անոնք գտած էին իրենց արարք-
ները արդարացնող զօրաւոր պաշտպան մը գոր-
ծիչ մարմնոյն մէջ, ու ասոր համար էր իրենց
ունէ ծրագիրը նախապէս ինձի կը հաղորդէին,
ստանալու համար իմ հաւանութիւնս:

Յուսահատ հայութեան բարոյական ոյժ,
իսկ գազան թշնամուն ալ սարսափ պատճառե-
լու նպատակով այդ երկուքը որոշած էին ձեռ-
նարկ մը ընել, իբր հակադրեցութիւն, հակա
հարուած:

Ու երեւակայեցէք որ ցաւին ու պէտքին
այս մտակլու մն ունեցողները 13-14 տարեկան
պատանիներ էին:

Ես համաձայն էի իրենց.

Միջոցը գտնուած էր: Պէտք եղածին չափ
դրամ տուի իրենց, նիւթերը գնելու համար,
ու իրիկուան կողմը սկսեցինք գործի:

Գնած էին ճերմակ մեղր, տափակ զլու-
խով փոքր գամեր, երկու տուփ ատրճանակի
քափսիւլ և առանց կափարիչի 15×22 սան-
թի մճճութեամբ և 4 սանթիմ խորութեամբ
թիթեղէ տուփ մը, զոր ներկեցինք սև գոյնով,

ապա չորս կողմէն փոքր փոքր ծակկեցինք ու
ծակերէն փոքր դամերը անցուցինք, յետոյ
մեղրը սկսանք եփել մինչև որ հասաւ խմոր
աստիճանին ու գոյնն ալ բաւական փոխուեցաւ:

Այդ խմորը լեցուցինք տուփին մէջ ու վը-
րայի կողմը կոնաձև ըրինք, յետոյ քափսիւլ-
ները փոլորը փակցուցինք խմորին վրան, ինչ-
պէս նաև բաւական ալ փոքր գամերէն, հաս-
կնալի է անշուշտ որ գամին զլխի մասը կը
թաղէինք խմորին մէջ միայն սուր ծայրն էր
դուրսէն կ'երեւնար:

Ձեռնարկին արդիւնքը մկրտեցինք սիւն-
միք անունով:

Ամէն բան պատրաստ է կը մնար սիւնմի-
քը գիշերը տանիլ և շուկան, տեսնուելիք տեղ
մը դնել իսկ այդ գործը էն վտանգաւորն էր,
որովհետև պահակներէն և գիշերապահներէն
կրնար տեսնուիլ, բռնուիլ և 101 տարի բանա...

Մելքոնը այդ հոգը ոչ սքիս թողուց:

Թուղթի թերթիկներ ալ պատրաստած
էինք. վրաները գրած «Կոփսիկ հեկրիզ, եհրսիկ
պիքերիզ, փեսայիյիզ պիզ» զօրս Մելքոնը թա-
փած էր հոս ու հոն:

Առաւօտ, կանուխ երէքս մէկ շուկայ գը-
նացինք. թուրքերը արդէն թերթիկները առած
գետնէն կը կարդան, իրարու ցոյց կուտան,
— Կեալուր ֆեաճիւր — բառերը կը հոլովուին, իսկ
հոն, վարը, առուին եղերքը բաւական բող
մութիւն կայ հաւաքուած:

Տիւնմիքը տեսած ու ոստիկանութեան
լուր էին տուեր, ան ալ իր կարգին կառավարի-
չին, որուն հրահանգը կ'ըլլայ սպասել ու ձեռք
չգպցնել տիւնմիքին մինչև իր գալը:

Վերջապէս եկաւ փաշան, տիւնմիքին շուրջ
հաւաքուած ամբոխը ճամբայ բացաւ: Թէ ինչ
ըսաւ մարդուկը՝ մենք չլսեցինք, որովհետև
ահազին թուրք բազմութիւն խոնուած էր
հրապարակը և ամէն ոք կ'աշխատէր տիւնմիքը
տեսնել, քանի որ մինչև այդ օրը բնաւ չէին
տեսած, միայն անունը լսած և սոսկացած էին:

Կարգը եկած էր այդ անաւոր առարկան
հրապարակէն վերցնելու: Ամբոխն է կը հեռա-
նայ, կը փախի, իրար կը հրմշտկեն, իրար կը
կոխտան, որովհետև կրնայ այդ անպիտանը պայ-
թիլ և ողջ քաղաքը հիմնայատակ կործանել...

Թուրք խուժանը մի կերպ չի կարողացաւ
լուծել սա հաշիւը թէ ինչպէս կ'ըլլայ որ լա-
պաշտպանուած շուկայի մը մէջէն խուժը մը
ֆէտայիներ կուգան ու կ'անցնին և կը մնան
աննշմար, ու իրենց մտածութեանց իբր եզրա-

կացութիւն, երդմամբ հաստատեցին որ «Ֆէ-տայի»ները սատանաներ են . . . :

Փաշան արագ քայլերով հեռացաւ հրաման ընելով «ֆոլիս»ի մը որ իր մեկնելէն վերջը «տի-նամիթ»ը վերցնէ: ոստիկանը չէր կատարէր փա-շային հրամանը, «յիւսքլաջօր, կիպերհէհյիւ» ըսե-լով: Ծիչդ այդ պահուն, Եղիշէն բաժնուելով մեզմէ մտաւ ամբոխին մէջ, ու ձեռքերը բը-ռունցքի ձեւով դրած կուրծքին վրայ, կծկը-տած, լալկանի դէմքով մը, սարսափահար ըս-կըսաւ պօռայ «փաթլա՛ր, փաթլա՛ր» ու պտըտ ուիլ, սարսափը թշնամիին սիրտը շատ աւելի տպաւորուելու համար: Եւ որպէս զի ձայնը կտրէ, մի քանի ապտակ ալ կերաւ Թուրքե-րէն, բայց անկարելի եղաւ լսել:

Վերջապէս Սասունցի հայ մը գտան, ծեծ ու շարշարանքով ոստիպեցին որ վերցնէ «տի-նամիթ»ը և ահաւոր դողդոջումներով առին տարին:

«Տինամիթ»ակիրը բոլորովին առանձին կը քալէր, ձեռքերովը վեր բարձրացուցած «տի-նամիթ»ը, երկու վայրկեանի հեռուէն կը հե-տեւին ոստիկաններն ու բաշմութիւնը, որոնց մէջ է Եղիշէն ու անդադար կը կրկնէ իր «փաթլա՛ր, փաթլա՛ր»ը:

«Տինամիթ»ը խիստ զգուշութեամբ դնել տուին «ֆոլիս տայիթէ»ին դէմը բաց տեղ մը, բամպակի վրայ որպէս զի չը պայթի:

Թուրք բժիշկներ հեռուէն դիտեցին «տի-նամիթ»ն ու հեռացան, վրայ հասաւ «պէլէ-տիէի յոյն բժիշկը, գնաց «տինամիթ»ին քով, զննեց, խնդաց քթին տակէն ու դգալ մը ու-ղեց: Երբ դգալը տրուեցաւ իրեն, մօտեցաւ մի առմի քափսիւններն ու գամերը քաշել հա-նել «տինամիթ»ին վրայէն, առանց մտիկ տալու կառավարութեան շէնքին պատուհան-ներէն երեւցող փաշայի և էֆէնտիններու գլուխ-ներուն ու պօռացող արգելքներուն որ չըզպչի «տինամիթ»ին որովհետեւ կը պայթի: Մանա-ւանդ բնաւ կարեւորութիւն չը տուաւ Եղիշէի «փաթլա՛ր»ներուն:

Երբ «տինամիթ»ը մաքրուեցաւ քափսիւ-ներէն ու դամբրէն, բժիշկը սկսաւ դգալ-դգալ ուտել մեր խեղճ տինամիթը, ահաւոր պակու-ցումի ենթարկելով բոլոր փաշա-մաշանները, ո-րոնք կ'սպասէին որ «տինամիթ»ը հիմա բը-ժիշկին փորին մէջ կրակ պիտի առնէ ու պիտի պայթի, կտոր-կտոր ընելով յոյնը:


Խեղճ տինամիթ . . .

Վրիպած հարուածը բարոյական աւելի մեծ սաստկութիւն ունի:

Փաշայի հրամանին անսաստող «ֆոլիս»ն ու շուկայի գող գիշերապահները անմիջապէս հանուեցան իրենց գործերէն, ինչ որ հայ խա-նութպաններուն համար մեծ շահ մըն էր, ո-րովհետեւ հայ խանութներէն շատերը կը բանային ու գողութիւնը անպակաս էր, իսկ հակահարուածը շատ յաջող անցաւ, որով-հետեւ կառավարութիւնը մտածեց որ այսօրուան կեղծ «տինամիթ»ը դնողը վաղը կրնայ իրա-կանը դնել և այդ ազդեցութեան տակ բաւա-կան ատեն սպաննութիւնները դադրեցուց: Շը-նորհիւ երկու մանուկներու այս յղացումին հայ գիւղացին քանի մը աժիաներ հանգիստ շունչ քաշեց:

ՍԻՍԱՆԻ ՆՍԻՐԱՆԳՆՍԵ

ՀԱՅ ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ



Նախնական ու անմիջական դարմաններու ծանօթութիւններ

Գ.

5. Վիրակապ. — Վէրքի մը լաւ կապուիլը, անոր արագ դարմանումին շատ կը նպաստէ. որովհետեւ եթէ ան լաւ կապուած չըլլայ, կը բացուի ու դուրսէն անոր մէջ աղտոտութիւն մտնելով կը գէշանայ:

Ուրեմն, սկսուտի մը համար վիրադարմա-նումի ծանօթ ըլլալէ աւելի պէտք է լաւ գիտ-նայ վէրք մը կապելը:


Վէրքերը կը կապենք նեղ ու երկայն լա-թերով, որոնց վիրակապ (bande) կ'ըսենք: Վի-րակապին լայնքն ու երկայնութիւնը վէրքին մեծութեանը ու տեղին համեմատ կը փոխուի: Այսպէս, մատի մը վէրքը փաթտելու համար կը բաւէ 3 սանդիմէթր լայնքով ու 50 սնդմթր. երկայնութեամբ վիրակապ մը, մինչդեռ կուրծ-քին վրայ գտնուած վէրք մը կապելու համար պէտք կայ 7էն 9 սնդմ. լայնքով և 4էն 5 մեթր երկայնութեամբ վիրակապ մը: Նոյնպէս սրուն-քին վրայի վէրքը կապելու համար պէտք կայ 5 սնդմ. լայնքով ու 3էն 3 1/2 մեղր երկայ-նութեամբ վիրակապ մը, մինչդեռ բազուկին համար՝ 3 սնդմ. լայնքով և 1,20էն 1,60 եր-կայնութեամբ վիրակապ մը:

Վիրակապ մը առաջուրնէ իր վրայ փաթ-
թուած պէտք է ըլլայ:

Շատ անգամ վիրակապ չգտնուած տեղ մը,
մեծ թաշկինակ մըն ալ անոր դերը կրնայ կա-
տարել: Այդ թաշկինակը իր վրայ ծալելով
եռանկիւն ձև մը առնելուն պատճառաւ, այս
վիրակապին եռանկիւն (triangle) կ'ըսենք:

Վէրք մը կապելը գիրքի մէջ կարգալով
կարելի չէ սորվիլ, այլ պէտք է կապելու փոր-
ձեր ընել, սորվելու համար: Հոս պատկերնե-
րով ցոյց կուտանք, մարմնոյն զանազան մա-
սերը վիրակապելու ձևերը:

Վիրակապը փաթ-
տելու համար, վիրակապին մէկ ծայրը մէկ քա-
նի անգամ իր վրայ ծալելու է, որպէս զի
կարծր առանցք մը ունենանք. վերջը այս ա-
ռանցքը աջ ձեռքին բթամատովն ու միջնամա-
տովը բռնելու է (պատկեր 3). չիաթուած մա-
սը կ'անցնի ձախ ձեռքին բթամատին և ցուցա-



Պատկ. 3


մատին մէջտեղէն. ձախ ձեռքին միւս մասները
վիրակապին առանցքին կռթնած ըլլալով, վի-
րակապին ամբողջութիւնը կը շարժի ձախէն
աջ, ընկերակցութեամբը աջ ձեռքին բթամա-
տին ու միջնամատին:

Վէրք մը կապած ժամանակնիդ, հետեւեալ
կանոնները պէտք է աչքի առջև ունենաք.

Ա. Պէտք է որ վիրակապը մորթին վրայ
փակածի պէս ըլլայ, և ոչ թէ ծալք ծալք:

Բ. Վիրակապը շատ սեղմելու չէ, որպէս զի
չնջերակները շատ չսեղմուին և արիւնը ազա-
տօրէն չըջան ընէ, այլ՝ ուշադրութիւնը ընելու
է որ, վիրակապը չափաւոր ու հաւասար ճըն-
չում մը ունենայ:

Գ. Միշտ վարի կողմէն սկսելու է կապել,
և վերի կողմէն վերջացնել: Վիրակապը վէրքէն




Պատկ. 4-5

բաւական մը վարէն սկսելու է, և վէրքէն բա-
ւական մը վերը վերջացնելու է:

Վիրակապ մը քակելու ժամանակ, պէտք
չէ բնաւ ուժով քաշել. եթէ վիրակապը փա-
կած ըլլայ, պէտք է զայն նախ կակուղցնել քաղջ
ջուրով թրջելով:

Պատկեր 4 և 5ը ցոյց կուտան մատ մը
վիրակապելու ձևը:




Պատկ. 6

Պատկեր 6ը ցոյց կուտայ ձեռքը և նախա-
բազուկը վիրակապելու ձևը:



Պատկ. 7

Պատկեր 7ը ցոյց կուտայ արմուկը վիրա-
կապելու ձևը:



Պատկ. 8

Պատկեր 8ը ցոյց կուտայ ոտքը և սրունքը
վիրակապելու ձևը:

Իսկ եռանկիւնով վէրք մը կապելու համար,
վէրքին տեղին ու մեծութեանը համեմատ եռան-

կիւնը մէկ քանի անգամ իր վրայ դարձնելով, պէտք եղած լայնութիւնը տալու է անոր:

Այրուածվներ. — Երբոր մարմինին մէկ մասը այրի, պէտք է, կարելի եղածին չափ շուտ, այրած մասը օդի ազդեցութենէն ազատել, որովհետեւ օդը ցաւը կ'աւելցնէ և ծանր հետեւանքներու պատճառ կ'ըլլայ:

Մակերեսային և թեթեւ այրուածքներու վրայ քսելու է կլիսէտին կամ վազէլին, օդէն պաշտպանելու համար: Այս տեսակ այրուածքերը մորթին վրայ միայն կարմրութիւն մը կը ձգեն:

Երբոր այրուածքը աւելի լուրջ ըլլայ, մորթը կը ջրոտի, իսկ եթէ այրուածքը ա՛յլ աւելի շատ ըլլայ, ո՛չ միայն մորթը կ'այրէ, այլ մինչև ոսկորին կ'երթայ և փտախտի պատճառ կ'ըլլայ:

Այս տեսակ ծանր այրուածքներու ատեն երբոր հագուստը մորթին փակած ըլլայ, պէտք չէ ձիգ ընել հագուստը հանելու. փակած մասին չորս կողմէն կտրելու է: Այս տեսակ պարագայի մը, արկածեալին ցաւերը մեղմացնելու համար, իւղոտած լաթ մը կամ իւղոտած բամպակ այրուած մասին վրայ դնելու է և թեթեւօրէն կապելու է:

7. Թունաւորումներ. — Թոյն կ'ըսենք այն նիւթերուն, որոնք երբ մարմինին մէջ մտնեն, մահուան պատճառ կ'ըլլան: Կան ալ նիւթեր որոնք այս թոյներուն դէմ կը կռուին և թող չեն տար որ թոյները իրենց վտանգաւոր դերը կատարեն. ասոնց հսկարոյն՝ կ'ըսենք: Բայց հակաթոյնը պէտք է ժամանակին առնուի, որորպէս զի օգտակար ըլլայ:

Երբոր մէկը թունաւորուի, սուկալի խիթեր (փորի ցաւ) կ'ունենայ. բերանն ու կոկորդը կ'այրին. վրան մարելիք կուգայ ու գոյնը կը դեղնի, բազկերակը քիչ կը զարնէ և վերջն ալ կը մեռնի:

Թունաւորումի մը պարագային ձեր ընելիք առաջին բանն է, ամիջապէս բժշկի մը լուր տալ. բայց, մինչև որ բժիշկը գայ, կրնայ ըլլալ որ թունաւորեալը մեռնի. ուստի ձեզի համար անհրաժեշտ է ձեր ընելիք նախնական դարմանները գիտնալ:

Նախ, ձեր նպատակը պէտք է ըլլայ, մարդուն առած թոյնը ստամոքսէն հեռացնել. ասիկա դիւրին կ'ըլլայ երբոր մարդը դեռ նոր թոյնը առած ըլլայ, որովհետեւ դեռ զայն մարսած չըլլար: Ստամոքսը պարպելու համար պէտք է որ թունաւորեալը փսխէ. բայց պետք է որ դուք անոր փսխեցնել տաք: Փսխեցնելու շատ խորզ միջոց մը կայ. փետուրով մը պզտիկ լե-

զուն կը խառնէք. փետուր չգտնուած ատեն ցուցամատովնիդ ալ կրնաք խառնել:

Թունաւորուած մարդու մը օգտակար ըլլալու համար, պէտք է թունաւորեալէն հասկնալ թէ՛ ինչո՞վ թունաւորուած է, որպէս զի անոր համեմատ հակաթոյն մը տաք:


Երբոր այրող թոյն մը առած է, ինչպէս առսէնիք, սիւպլիմէ, ասիտ սիւլֆուրիք (սաճեաղը) ասիտ նիթրիք (քէզապ) ամոնիազ, պէտք է փսխեցնել, մեծ քանակութեամբ քաղջ ջուր և կաթ խմցնելով. որովհետեւ թոյնը ասոնց մէջ կը խառնուի: Կաթին տեղ մածուն և հակիթի ճերմակ ալ կը գործածուի:

Երբ թունաւոր սունկով թունաւորուած է, սուրճով լիմոնի ջուրը խառնելով տալու է:

Երբոր թունաւորեալի մը քով ժամ մը կամ աւելի վերջ հասնիք, անմիջապէս ուժ տուող դարմաններ ընելու էք, որ տաք ջուրի մէջ խառնուած օդի, զօրաւոր սուրճ կամ գինի խմցնելու է:

(Շարունակելի)

Յ. Ք.



ԴՐՈՒ Ա Գ Մ Ը

ՊՅՅ-ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ

(Վիպակ)

Երկաթուղին Ք... քաղաքէն սրնթաց անցնելով մշակուած, գեղեցիկ դաշտագետնէ մը կանգ առաւ ըլլակի մը ստորոտը, քարահանքի կայանը. ջրամբարը լեցնելու համար. ու շարունակեց իր գնացքը, սուրալով հովի մը պէս, որովհետեւ հայրենիքի ծառայութեան համար ամէն ի՛նչ գերմարդկային շարժման մը մէջ էր. պատերազմի վտանգներով առլի «լինել թէ՛ չըլինել» ճգնաժամային այդ սև օրերուն, զոհաբերութեան այդ շրջանին:

Ամայի այդ վայրին մէջ երեւցաւ մէկը, որ՝ քիչ առաջ աննշմար կերպով վար իջած էր ճեպնթացէն երեւոյթէն դատելով ան կը նմանէր հնախոյզի մը, որ կարծես եկած էր այդ քարահանքին մէջ պրպտելու բնութեան սքանչելիքները, սակայն ան՝ փոխան բրիչի ձեռքը ունէր մեծ պայուսակ մը ուրկէ զգուշութեամբ հանեց թղթի կտոր մը որուն յատակագիծ մը ըլլալը պարզ կ'երեւէր: Ան իր գործը սկսելէն



Գահիրէի (Եգիպտոս) հայ սկաուտներու Ռահվիրայներու խումբի կողմէ 1918ի տարեկան հանդէսի ատեն Գալստեան վրձ.ի բակին մէջ շինուած կամուրջը

հազիւ քառորդ ժամ անցած ժայռերուն մէջէն վերցուց փորրիկ ծրար մը որ խնամով գրպանելէ վերջ հեռացաւ այդ վայրէն՝ ուղղուելով դէպի հեռուն գետակին մօտ երեցող հիւղակը։ Իր ճամբան կը խաչածելու էր, սպասեց ու նշատաւ քառուղիներու մէջտեղը։ Յոգնած էր քրաւամբ իր արտաքինին չէր համապատասխաներ պայուսակին ծանրութիւնը որ դժուարաւ կը կրէր։ Բայց երկար չը տեսց երբ յատկանշական ժպտով մը նշմարեց օթօձօպիլ մը ու պատրաստուեցաւ դիմաւորելու, քանի մը վայրկեան և արդէն ինքն ալ կ'ընկերանար ուրիշ երիտասարդի մը որ՝ մեքենավարին քով նստած էր, գնացքը շեղելով հասան ու կանգ առին հիւղակին առջև որ ուրիշ բան չէր եթէ ոչ հին պանդոկ մը որ կը պատկանէր մօտակայ կամուրջի պահապանին։ Պանդոկին տէրը շատոնց մեռած էր և իր տունն ու գործը ժառանգ թողուցած էր իր կնոջ ու որդւոյն, տասներեք տարեկան Ռօպերտին։

Ռօպերտ կը ծառայէր պանդոկին մէջ խեղճ մայրը ի վիճակի չէր ծառայ մը առնելու այս ալ պատմական հիւրերու համար, մանաւանդ որ հայրենիքը թոյլ չէր տար շուայլ ըլլալու և Ռօպերտ դիմաւորեց հիւրերը ազգասիրական թօնով մը մտածելով գուցէ որ, հիւրերը ճակատէն կուգային և թերեւս իր ծառայութեան ալ պէտք ունենային, քանի որ՝ ինքը հաւատարիմ պոյ-սկաուտ մըն էր և որոշ ժա-

մեր կուգար իր մօրը Զօգնելու։ Հիւրերը սրահ տանելէ վերջ երբ ծառ պայուսակը հոն փոխադրած էր և տիրոջ հրամանի կը սպասէր, զարմանալով լսեց որ՝ անոնք թշնամի լեզուով կը խօսակցէին իրարու հետ։ Իր ծառայի պարտականութիւնը կատարելէ վերջ կը պատրաստուէր իր գործին երթալ յանկարծ զգաց թէ՛ կոշտ մատներուն տակ իր ականջը կը քալարուէր և ա զարձաւ և առանց բացատրութիւն պահանջելու մեկնեցաւ և իր օձիքը ազատեց։ Բայց չը կրցաւ իր կասկածին հետ իր նողկանքը զսպել, և առանց մօրը բան մը ըսելու իսկ մեկուսացաւ այն սենեակը որ բարակ միջնորմով մը բաժնուած էր հիւրանոցէն և հոն ունկընդրեց։ Ռօպերտ շնորհիւ իր ուսումնատենչ բնաւորութեան, արդէն իր մայրենի լեզուն զատ քաջանմուտ կը խօսէր ուրիշ լեզուներ, հետեւաբար, դիւրութեամբ հասկցաւ հիւրերուն բարձրաձայն խօսակցութիւնը որոնք չափազանց ինքնավստահ էին այդ մենութեան մէջ։

— Յարգելի և վսեմաշուք Զօրապետ... կը ներէք ըսեմ Զեզ որ ինձ զարմանալի թուեցաւ Զեր քիչ առաջուան վարժունքը պանդոկի տղուն հանդէպ արդէօք արժանի էր Զեր յոգնութեան այդ մուկը որ մի քիչ ճւայտցիք...։

— Ազնիւ բարեկամ... նախ յայտնեմ Զեզ որ՝ կը փափաքիմ չը շարունակէք ծայր աստիճան քաղաքավարական ձեւեր գործածել՝ զիս կոչելով իմ հին անունովս ու տիտղոսովս, որովհե-



Նստած՝ Մր. Նիւմըն (նախկին սկաուտ-պետ Այտընի կուսակալութեան հայ սկաուտներու) եւ Պրն. Մ. Եա. Նըզեան (այժմ սկաուտ պետ Այտընի Հայ սկաուտներու).
 Ոսթի կանգնած, մէջեզի կարգ.— Պրն. Վարդգէս Տէր-Բարթող (սկաուտ-մասթըր 2րդ բանակի), 3. Պրն. Յակոբ Մարգարեան (սկաուտ-մասթըր 3րդ բանակի), 3. Պրն. Մինասեան (սկաուտ մասթըր 4րդ բանակի), 4. Պրն. Օհան Օհանեան (սկաուտ-մասթըր առաջին բանակի).
 Ոսթի կանգնած, երրորդ կարգ — Պրն. Վահրամ Գրպ-րըզլեան (փոխ-սկաուտ մասթըր 3րդ բանակի), 2րդ Պրն. Ռաֆիի Կիւրճեան (սկաուտ մասթըր Կեդր. Որբանոցի 3րդ բանակի (Քաջաց բանակ)).

աւ եթէ դուք ինձ Զօրապետ կոչէք կ'ըստիպէք ինձ, Ձեզ անուանել պատուական փրօֆէսօր... խկ մենք գործերու բերումով պարզ ընկեր ենք թշնամի երկրին մէջ պարենաւորման հսկիչի դերին մէջ ?? Յետաձգենք այժմ այդ ձեւերը այն օրուան երբ մեր հայրենիքը լի ու լի պիտի վարձատրէ մեր ըրած ծառայութիւնները: Երբ մեր յաղթական արծիւի և երկնատուր երկաթէ խաչերու շքանշաններով եւս առաւել պիտի զարդարուին մեր կուրծքերը... ո՛հ... կայսերական պալատներէն ներս զիրար ողջու-նելով յիշենք այս օրը որ այնքան յիշատակելի պիտի մնայ մեր մտածումներուն մէջ մեր տա-րած անձնական յաղթանակին համար...: Սա-կայն աղնիւ ընկեր չեմ կրնար չը յայտնել Ձեզ

որ՝ ամէն անգամուն երբ սա խլուրդները կը տեսնեմ, երակներուս մէջ իժի մը նման շրջան կ'ընէ արիւնս և եթէ վստահ ըլլամ թէ՛ մեր գործին արգելք պիտի չ'ըլլայ այս վայրկեանիս իսկ սա երկու մատներովս այդ խլոտ սկաու-տին վիզը կը պոկեմ. որովհետև ամէն անգա-մուն որ՝ յաջողուած գործ մը կ'ունենամ ան-պայման այսպէս մողէզ մը կը տնկուի դէմս: Ահա այսօրուան պատահարը: Երբ ամէն ինչ յաջող էր, մեզ հետապնդող գաղանի ոստիկան-ներէն երկուքը ճամբած էինք... ամէն քայ-լափոխիս այս մարախները մեզ կը կեցնէին և օթօմօպիլին թիւը կը քննէին կ'երեւի անմա-հացածներէն!!! մին իր ափին մեծ նշանակած էր թիւ մը որ՝ չը գիտեմ քաներորդ ան-գամն ըլլալով փոխեցինք: Ասոնցմէ ոմանք ալ յարմար տեղեր հայրենասիրական պարտք հա-մարեցինք դրկել երկնային!!! պանդոկներ մեր պաշտելի զինուորներուն ծառայելու համար-Ահա պատճառը որ՝ Ձեզ ալ յոքնեցուցինք մեր ուշանալով:

— Հա՛, հա՛, հա՛, չափէն աւելի պատուած էք զիրենք...

— Հա՛, հա՛, հա՛ եթէ կ'ուզէք ասոր գոր-ծըն ալ ինձի յանձնեցէք — միջամտեց մեր հնա-խոյզ — փրօֆէսօրը:

(Շարունակելի) ԽՈՍՐՈՎ Կ. ՆԵՐՍԷՍԵԱՆ

Հ Ա Յ Ի Ե Ն Ի Ք

Անձնուէր եմ հայրենիքս,
 Միտ անվարան կուտամ հոգիս,
 Բարձր բունեմ դրօշն ազգիս
 Ռուս ի սես հրնուի հոգիս:

Յերեկ զիբեր խորն երազիս,
 Քնեուս ցիւրք մտածումիս,
 Սեւեռակէսն իմ մեծ յոյսիս՝
 Հայրենիքս է հայրենիքս:

Ես չեմ գտնեւ ուրիտ սեղ մը
 Որ կարեմամ զնչել հեղ մը,
 Այնքան ազատ եւ բերկրալի,
 Քան հայրենեաց օդ ցանկալի:

Ձրկան այլուր հրնուանք խայտանք,
 Կամ մեզ ազդէ վեհ պատկառանք
 Եւ մեքն լցուինք խանդով մը սաք՝
 Քան հայրենեաց երկինքին սակ:

Թե մենք ցանկանք հետո աշխատանք
 Որ դիւրութեամբ հարստանանք,
 Հոն պիտ' գտնենք բիւր հարուստ հանք,
 Սուրբ հայրենեաց հողերուն սակ:

Օղն ու ջուրը այնքան հաղթ,
 Գետեր դաւեւեւ լեռներ բարձր,
 Կեանք սայ մեզի մէն մի մասնիկ
 Որ կը բուրեւ մեր հայրենիք:

Ել հայ տղայ ուժի եկուր
 Քաջ եղբարցդ սիրով բեւ տուր
 Որ շինենք վայրերն բափուր
 Հայրենիքն Ասուածատուր:

Ով հայրենիք, որդիդ անյազ
 Սիրով յցուած առ հեզ կուգանք,
 Ընդունեւ մեզ գրկիդ մեջ սաք
 Ձի Քեզ ունինք մեծ սեր յարգանք:
 Մագրիցիդ ԳԱՌԼՕ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԲԱԺԻՆ

ՊԱՏՐԱՍՏՈՒԻՆՔ ՀԱՅԿ. ՈՂԻՄԲԵԱԿԱՆԻՆ



Կը յուսանք որ այս տարի կարկի կ'ըլլայ
 Հայկ. Ողիմբիականը կատարել մայիս ամսուան
 մէջ և այդպէսով ազատել անոր մասնակցող
 արիւթները օգոստոսի արեւէն: Բնական է որ
 դարձանավերջի զով և գեղեցիկ օշով կատար-
 ուած մրցումը շատ աւելի խոնդավառութիւն
 կ'ունենայ և կուտայ աւելի փայլուն արդիւնք-
 ներ, քան ամառնային տաք և ջրատիչ օդերուն
 մէջ եղածը: Սքոռի ամէն ճիւղ իր որոշ եղա-
 նակն ունի. և եթէ կ'ուզենք որ դաշտախաղը
 մեր ակնկալած բոլոր գեղեցիկ արդիւնքները
 տայ նոր սերունդին՝ պէտք չէ՝ ստիպենք մեր
 արիւթները որ գան մրցին կրակ կտրած երկին-
 քի մը տակ: Մանաւանդ որ մրցումի օրը որ-
 քան երկարաձգուած ըլլայ, բնականաբար ան-
 կէ առաջ կատարուելիք փորձերն ալ նոյնքան
 կ'երկարաձգուին. ու այս պայմաններուն մէջ
 դաշտախաղը աւելի վնաս քան թէ օգուտ կու-
 տայ մեր անփորձառու պատանիներուն:

Ուրեմն, ենթադրելով որ կը յաջողինք այս
 տարի մայիսի մէջ կատարել մեր Ողիմբիականը,
 տակաւին աւելի քան երեք ամիս ունեցած
 կ'ըլլանք մեր առջեւ: Կանոնաւոր է դեռ անոր
 վրայ խորհելու, անոր պատրաստուելու համար:
 Ո՛չ, ճիշտ ժամանակն է — եթէ սքոռին վրայ
 պիտի նայինք այնպէս ինչպէս ամերիկացիք՝
 աշխարհի առաջին սքորդակներ՝ կը նային ա-
 նոր, պէտք է որ բոլոր մարմնակրթական ա-
 կումները հիմակուրէն սկսին լուրջ և մէթո-

տիկ գործունէութեան՝ պատրաստելու համար
 իրենց արիւթները Ոգորումի Օրուան: Յաւալի
 է որ մենք դեռ շատ մակերեսային կերպով կը
 մտածենք ազգային կենսունակութիւնը ալ ծար-
 քելու կոչուած այս ազգակին վրայ՝ որ դաշ-
 տախաղն է: Մեր արիւթ ընկերներէն շատեր
 պարզապէս թեթեւատութիւնով կ'առնեն ա-
 նոր գաղափարը, կը կարծեն որ անիկա դիւ-
 րին, քիչ մը տղայական, և գրեթէ բնաւ խը-
 նամքի պէտք չ'ունեցող բան մըն է. իսկ քիչ
 չէ նոյնպէս թիւր անոնց որոնք հազիւ դաշտ
 իջած՝ կը ձգեն, կը հեռանան անկէ, համոզում
 գոյացնելով որ չ'արժեր սքոռի համար ճիգ ը-
 նել՝ քանի որ անոնք միայն կոչուած են յաղ-
 թանակ տանելու, որոնք բնականէն օժտուած
 են մանաւոր յատկութիւններով՝ վազելու,
 ցատկելու: Այս երկու կերպ մտածումներն ալ
 կատարելապէս սխալ են: Դաշտախաղը վերջին
 ծայր նուրբ և ախտառութիւն պահանջող բան
 մըն է. ունէ արիւթ, հոգ չէ թէ ինչ ուժի և ըն-
 դունակութիւններու տէր ըլլայ, պէտք ունի
 կանոնաւոր և խելացի կերպով կատարուած
 կրթանքի շրջանի մը (training), ուր ամիսներ
 կը տեւէ, շատ խաղերու համար՝ տարիներ:
 Այս շրջանը աղէկ բոլորող արիւթը միայն յաղ-
 թանակին յոյսը կ'ունենայ մրցումին օրը: Պա-
 տահած չենք, զանազան մրցումներու ատեն,
 բնականէն զօրեղ և մկանային գեղեցիկ կազմի
 տէր մրցորդներու, որոնք կը պարտուին՝ օրի-
 նակ՝ գունատ նետելու մէջ, իրենցմէ նուազ զօ-
 րաւոր և նուազ աչքառու մրցորդներէ: Պատ-
 ճաշը պարզ է. յաղթականը պատրաստուել է



Խմբանկար Գահիրեի «Արարատ» Մարմնամարզական Միութեան: Մէջտեղ նստած սիւլիլ հարուստովը մարզանքի ուսուցիչ Պ. Ս. Խանճեանն է:

ողորումին, այսինքն՝ իր համեստ ուժերը դր-
րեր է այնպիսի վիճակի մը մէջ որ կրնայ յայ-
նօրէն, օգտակարապէս գործածել զանոնք՝ եր-
կաթ գունտին տալու համար չքեղ թոխք մը,
մինչդեռ միւսը՝ իր կոշտ ուժին վստահ՝ ոչինչ
ըրեր է և մետասաներորդ ժամուն միայն ելեր
է դաշտ: Նոյնն է պարագան բոլոր միւս խա-
ղերուն համար:

Խնամեցէք, ճիշտ ժամանակին, ձեր պըզ-
տիկ երեցող ուժերը. մշակեցէք ձեր դիւրա-
շարժութիւնը, ճկունութիւնը, յոգնութեան
դիմադրելու կամքը, «գերազոյն ճիգը ընելու»
ընդունակութիւնը, և պիտի տեսնէք որ յաղ-
թանակը ձեզի ալ պիտի գայ. անիկա երբեք
ժլատ չ'է. ուր որ ճիգ կայ, ուր որ չըլուսալըք-
ուող աշխատանք կայ, հոն է անիկա:

Եւ յետոյ, ի՛նչ արգահատելի փոքրոգու-
թիւն ցուցուցած պիտի բլլար այն պատանին
որ հեռու մնար Ողիմբիականի պատրաստու-
թեան այս շրջանէն՝ վստահ չ'ըլլալուն համար
որ մրցումին օրը պիտի կարողանար այս կամ
այն խաղին մէջ դասինի խլել: Հէ՛ք մտայնու-
թիւն, որմէ վարակուողներուն թիւը քիչ չէ
մեր հին թէ՛ նոր, ծանօթ թէ՛ անծանօթ սքօրդ-
մեկներուն մէջ: Սիրելիս, Հայկ. Ողիմբիա-
կանը քեզի կամ ինձի կտոր մէտալլիօններ տա-
լէ աւելի տարրեր նպատակ մը կը հետապնդէ,
կամ պէտք է հետապնդէ: Եթէ մարմնակրթու-
կան այս շարժումը կ'ստեղծենք տեսակ մը ու-
նայնամիտ ցոյցի և գռեհիկ փառասիրութիւն-
ներու գոհացումին՝ համար, պէտք է խոստու-

վանինք որ, մենք դեռ չատ եղկելի մարդիկ
ենք: Բայց կը հաւատամ որ այդպէս չէ: Շար-
ժումը ծայր տուած է ազգային խորունկ և ան-
յեասաձգելի պէտքէ մը մղուած. անիկա ար-
դիւնք է միահամուռ կերպով զգացուած այն
անհրաժեշտութեան թէ՛ մեր կործանած ազգը
հարկադրուած է՝ վերակենդանացման սա դը-
ժընդակ օրերուն՝ հաւաքել և արժէք տալ իր
բոլոր ուժերուն, գերազոյն պրկումով մը կա-
րենալ դիմակալելու համար գալիք ծանր օրե-
րը: Եթէ այս տեսակէտով մօտենանք սքօրին,
և, ընդհանուր կերպով, բովանդակ մարմնա-
կրթութեան, անիկա իսկոյն կը գրաւէ՝ ստեղ-
ծուած ուրիշ շատ մը համազգային շարժում-
ներու քով՝ առաջնակարգ տեղերէն մէկը: Եւ
ինչո՞ւ չի գրաւէ: Երբ Միացեալ Նահանգներու,
Անգլիոյ և՛ ընդհ. պատերազմի ցնցումէն ի
վեր՝ Յրանսայի պէս հզօր պետութիւններ ա-
հագին ճիգեր կ'ընեն իրենց երկիրներուն մէջ
կարելի հղածին չափ տարածելու, ժողովրդա-
կանացնելու մարմնամարզը և մարմնակրթան-
քը. մենք ենք որ պիտի արհամարհենք զա-
նոնք, մեր այս ուժաքամ բայց թաքուն և
հզօր կենսունակութիւնով զեղուն ժողովուրդս:

Այսպէս, աթլէթ բարեկամս, խորհէ որ ի-
րաւունք չունիս ճղճիմ, անձնասիրական նկա-
տումներով լքելու դաշտը: Բու հոգիդ, իբրեւ
ճշմարիտ արդիքի հոգի, պէտք է անձանօթ
մնայ բոլոր սին և ստոր մտածումներուն և զին-
ուի՝ իբրեւ ճշմարիտ հայ՝ խանդավառ հայրե-
նասիրութիւնով մը: Հայրենիքը հաւասարա-
պէս պէտք ունի քու պղտիկ ուժիդ, իմ քիչ

մը աւելի մեծ ուժիդ և անոր հսկայական ուժին: Երեքս ալ անհրաժեշտ ենք, երեքս ալ բեռ պիտի տանինք մեր ուսերուն վրայ, ու մար մէջէն ամենէն աւելի արժանիք ունեցողը այն է՝ որ կը ճգնի իր ուժը, իր տանելու ընդունակութիւնը աւելցընել՝ կարենալու համար նոր ծանրութիւններ զարնել ուսին:

Այս աչքով նայինք Դաշտախաղին վրայ, մէկզի դնելով մեր պզտիկ հաշիւները և մեր շատ խոշոր ունայնա՛տութիւնը որ հինէն ի վեր այնքան գէշ կերպով վարակած է մեր արդիւնքի միջնորդը: Հին նկատումները, հին քիւրքը, հին ոգին մոռնանք, ինչու որ այն նպատակը զոր հիմայ կ'առաջագրենք ձեռք բերել ֆուդպոլի մրցումներով, Հայկ. Ողիմբիականներով, սկառուտական կազմակերպութիւններով՝ շատ աւելի բարձր է և ներշնչող քան հինը: Նեառութիւնք դէպի դաշտը, մեր հոգիներուն բովանդակ խանդավառութիւնովը, և իւրաքանչիւր անգամ որ մեզմէ մէկը, օրինակ, կէս մղոն կը վազէ, թող մտարերէ ո՛չ միայն սա մայիսի ողիմբիականը, այլ այն օրը՝ երբ հրացանը ուժգին սեղմած իր ձեռքերուն մէջ, պիտի վազէ նորէն, հայկական բանակին շարքերուն մէջ կորսուած, իր անիրաւուած հայրենիքին ազատագրութեանը համար:

Յաջորդ թիւով կը փափաքիմ թելադրութիւններ ընել Ողիմբիականի պատրաստութեան այս շրջանին մէջ մեր ամբլէթներուն կատարելիք փորձերուն և ապրելիք կեանքին մասին:

Պեղ. Վարժարան **Մ. ԶԱՐԻՅԵԱՆ**

Մ. ԽՄԲ. - Նախ մենք պիտի փափագէինք որ ասկէ վերջ մեր մէջ «Ողիմբիական Խաղեր» անունը փոխանակուէր ՄԱՍԵԱՑ ԽԱՂԵՐ: Երկրորդ հոգ չէ թէ պայմանաժամ ուշանար մի քանի ամիս եւս և մենք, ՄԱՍԵԱՑ ԽԱՂԵՐ, կատարէինք Արարատեան դաշտի կամ Աւարայրի մէջ, Մասիսի վրայ ծածանող հայ դրօշին տակ ՄԱՍԵԱՑ ՔԱՂԵՐՈՒ որբանին մէջ ծանօթ Ողիմբիական խաղերուն վրայ աւելցնելով զուտ տոհմային պատանեկան խաղեր ալ: Այն ատեն մենք աշխարհի ամէն կողմերէն հայ մարզիկներ կը հրաւիրենք Հայաստան որով Հայութեան ուշադրութիւնը կը դարձնենք հոն, դէպի հայրենիք, տառապած և յուսալքուած գաղթականութեան ոգեւորութիւն և կորով կը ներշնչենք և մրցումները կ'ելլեն զուտ պոլսահայ բնոյթ կրելէ և Մայր Երկիրը իրական ոգեւորութիւն կ'ստանայ: Եթէ սպասենք դէպքերու վճռին թերեւս անոնք շատ ուշանան: Հայաստանը, այժմ, աւելի քան երբեք, պէտք ունի քաջալերուելու և ոգեւորուելու: Ուրեմն հիմակուանէ իսկ ձեռնարկենք պատրաստուելու ՀԱՅԿԱԿԱՆ (ու պոլսահայ), ՄԱՍԵԱՑ խաղերու և հրաւիրենք համաշխարհի հայ մարզիկները գալ հաւաքուիլ Մասիսի փէշերուն տակ իրենց կուրծքերը զարգարելու «ՄԱՍԵԱՑ ՔԱՂԵՐ» պատուանշանով:

ՄԱՐԶԱՇԽԱՐՀ



Յ Ո Ւ Թ Պ Օ Լ

Յնվ. 24ին Անգլիոյ և Կալիֆոռնիայի ֆութպոլի կարեւոր մրցում մը տեղի ունեցաւ: Խաղավայրը ցեխոտ ու օդը անձրեւոտ էր: Խաղին սկսելէն 35 վայրկեան վերջ Անգլիա յաջողեցաւ իր առաջի կոչը ընել: Յաջորդաբար Անգլիա ութը կոչ եւս բրաւ, այսպէս 0 իդէմ 9 կոչով Կալիֆոռնիա պարտուեցաւ: Մուտքի դուտ հոտոյթ՝ 390 կարմիր ոսկի! Եղաւ:

* * * Նոյն օրը Անգլիոյ և Կալիֆոռնիայի միջև Ռեկպի մրցում մը տեղի ունեցաւ. սակայն այս անգամ բաղդի նժարը հակառակ կողմը ծռելով, Անգլիա 5ի դէմ 19 կոչով պարտուեցաւ:

* * * Յնվ. 4ին, Բարիզի մէջ Սկոտլոնդի և Ֆրանսայի միջև հետաքրքրաշարժ Ռեկպի մրցում մը տեղի ունեցաւ: Ֆրանսա պարտուեցաւ, թէև բայց Ֆրանսական մամուլը գոհ է այս պարտութենէն, որովհետև թէ վերջ պիտի տայ կարգ մը միութիւններու աւելորդ պաճենկոտութիւններուն և թէ պիտի ապացուցանէ թէ՛ Ֆրանսացիները լրացնելիք շատ մը պակասութիւններ ունին: Մենք դարերէ ի վեր պարտուեցանք, երանի թէ մենք ալ Ֆրանսացիներուն պէս սկսէինք մեր անցեալի պակասները և ներկայ մեծախօսիկութեան անդունդները գոցել:

* * * Սպանիոյ ազգային ֆութպոլի Լիկան Անվէրսի Միջազգային ֆութպոլի մրցումներուն մասնակցիլ որոշած է: Ֆրանսական թերթեր խորհուրդ կուտան որ մասնակցելէ առաջ, լաւ պատրաստուին, որովհետև Սպանիոյ մէջ շատ կարեւորութիւն չըտրուիր անոր:

Կարգ մը Անգլիացի ֆութպոլիստներ թելադրած են որ ձգուենք թելէ ցանցի տեղ,

մը աւելի մեծ ուժիդ և անոր հսկայական ուժին: Երեքս ալ անհրաժեշտ ենք, երեքս ալ բեռ պիտի տանինք մեր ուսերուն վրայ, ու մօր մէջէն ամենէն աւելի արժանիք ունեցողը այն է՝ որ կը ճզնի իր ուժը, իր տանելու ընդունակութիւնը աւելցնել՝ կարենալու համար նոր ծանրութիւններ զարնել ուսին:

Այս աչքով նայինք Դաշտախաղին վրայ, մէկդի զնելով մեր պզտիկ հաշիւները և մեր շատ խոշոր ունայնատութիւնը որ հինէն ի վեր այնքան գէշ կերպով վարակած է մեր արդիւնքի մթնոլորտը: Հին նկատումները, հին քիթերը, հին ոգին մոռնանք, ինչու որ այն նպատակը զոր հիմայ կ'առաջադրենք ձեռք բերել ֆուդպօլի մրցումներով, Հայկ. Ողիմբիականներով, սկսուածական կազմակերպութիւններով՝ շատ աւելի բարձր է և ներշնչող քան հինը: Նեո-ուի'նք զէպի դաշտը, մեր հոգիներուն բովանդակ խանդավառութիւնովը, և իւրաքանչիւր անգամ որ մեզմէ մէկը, օրինակ, կէս մղոն կը վազէ, թող մտաբերէ ո՛չ միայն սա մայիսի ողիմբիականը, այլ այն օրը՝ երբ հրացանը ուժգին սեղմած իր ձեռքերուն մէջ, պիտի վազէ նորէն, հայկական բանակին շարքերուն մէջ կորսուած, իր անիրաւուած հայրենիքին ազատագրութեանը համար:

Յւշորդ թիւով կը փափաքիմ թելադրութիւններ ընել Ողիմբիականի պատրաստութեան այս չրջանին մէջ մեր ակնթիւներուն կատարելիք փորձերուն և ապրելիք կեանքին մասին:

Պեքպ. Վարժարան **Մ. ԶԱՐԵՅԵԱՆ**

Ծ. ԽՄԲ. - Նախ մենք պիտի փափագէինք որ ասկէ վերջ մեր մէջ «Ողիմբիական Խաղեր» անունը փոխանակուէր ՄԱՍԵԱՑ. ԽԱՂԵՐՈՒ: Երկրորդ հոգ չէ թէ պայմանաժա՛ր ուշանար մի քանի ամիս եւս և մենք, ՄԱՍԵԱՑ ԽԱՂԵՐԸ, կատարէինք Արարատեան դաշտի կամ Աւարայրի մէջ, Մասիսի վրայ ծածանող հայ դրօշին տակ ՄԱՍԵԱՑ ՔԱԶԵՐՈՒՒ որրանին մէջ ծանօթ Ողիմբիական խաղերուն վրայ աւելցնելով զուտ տոհմային պատանեկան խաղեր ալ: Այն ատեն մենք աշխարհի ամէն կողմերէն հայ մարզիկներ կը հրաւիրենք Հայաստան որով Հայութեան ուշադրութիւնը կը դարձնենք ինչ, զէպի հայրենիք, տառապած և յուսալքուած գաղթականութեան ոգեւորութիւն և կորով կը ներշնչենք և մրցումները կ'ելլեն զուտ պոլսահայ բնոյթ կրելէ և Մայր Երկիրը իրական ոգեւորութիւն կ'ստանայ: Եթէ սպասենք զէպերու վճռին թերեւս անոնք շատ ուշանան: Հայաստանը, այժմ, աւելի քան երբեք, պէտք ունի քաջալերուելու և ոգեւորուելու: Ուրեմն հիմակուանէ իսկ ձեռնարկենք պատրաստուելու ՀԱՅԿԱԿԱՆ (ոչ պոլսահայ), ՄԱՍԵԱՑ խաղերու և հրաւիրենք համաշխարհի հայ մարզիկները գալ հաւաքուիլ Մասիսի փէշերուն տակ իրենց կուրծքերը զարգարելու «ՄԱՍԵԱՑ ՔԱԶԵՐ» պատուանշանով:

Ծ. ԽՄԲ. - Նախ մենք պիտի փափագէինք որ ասկէ վերջ մեր մէջ «Ողիմբիական Խաղեր» անունը փոխանակուէր ՄԱՍԵԱՑ. ԽԱՂԵՐՈՒ: Երկրորդ հոգ չէ թէ պայմանա՛ր ուշանար մի քանի ամիս եւս և մենք, ՄԱՍԵԱՑ ԽԱՂԵՐԸ, կատարէինք Արարատեան դաշտի կամ Աւարայրի մէջ, Մասիսի վրայ ծածանող հայ դրօշին տակ ՄԱՍԵԱՑ ՔԱԶԵՐՈՒՒ որրանին մէջ ծանօթ Ողիմբիական խաղերուն վրայ աւելցնելով զուտ տոհմային պատանեկան խաղեր ալ: Այն ատեն մենք աշխարհի ամէն կողմերէն հայ մարզիկներ կը հրաւիրենք Հայաստան որով Հայութեան ուշադրութիւնը կը դարձնենք ինչ, զէպի հայրենիք, տառապած և յուսալքուած գաղթականութեան ոգեւորութիւն և կորով կը ներշնչենք և մրցումները կ'ելլեն զուտ պոլսահայ բնոյթ կրելէ և Մայր Երկիրը իրական ոգեւորութիւն կ'ստանայ: Եթէ սպասենք զէպերու վճռին թերեւս անոնք շատ ուշանան: Հայաստանը, այժմ, աւելի քան երբեք, պէտք ունի քաջալերուելու և ոգեւորուելու: Ուրեմն հիմակուանէ իսկ ձեռնարկենք պատրաստուելու ՀԱՅԿԱԿԱՆ (ոչ պոլսահայ), ՄԱՍԵԱՑ խաղերու և հրաւիրենք համաշխարհի հայ մարզիկները գալ հաւաքուիլ Մասիսի փէշերուն տակ իրենց կուրծքերը զարգարելու «ՄԱՍԵԱՑ ՔԱԶԵՐ» պատուանշանով:

ՄԱՐԶԱՇԽԱՐՀ

Յ Ո Ւ Թ Պ Օ Լ

Յնվ. 24ին Անգլիոյ և Կալլէսի միջև ֆութպօլի կարեւոր մրցում մը տեղի ունեցաւ: Խաղի սկսելէն 35 վայրկեան վերջ Անգլիա յաջողեցաւ իր առաջի կօլը ընել: Յաջորդաբար Անգլիա ութը կօլ եւս բրաւ, այսպէս Օ իղէմ 9 կօլով Կալլէս պարտուեցաւ: Մուտքի զուտ հետոյթ՝ 390 կարժիր ոսկի! եղաւ:

*. Նոյն օրը Անգլիոյ և Կալլէսի միջև Ռեկպիի մրցում մը տեղի ունեցաւ. սակայն այս անգամ բաղդի նժարը հակառակ կողմը ծռելով, Անգլիա 5ի դէմ 19 կօլով պարտուեցաւ:

*. Յնվ. 4ին, Բարիդի մէջ Սկոտլոնդի և Ֆրանսայի միջև հետաքրքրաշարժ Ռեկպիի մրցում մը տեղի ունեցաւ Ֆրանսա պարտուեցաւ, թէև բայց Ֆրանսական մամուլը գոհ է այս պարտութենէն, որովհետև թէ վերջ պիտի տայ կարգ մը միութիւններու աւելորդ պածենկոտութիւններուն և թէ պիտի ապացուցանէ թէ՛ Ֆրանսացիները լրացնելիք շատ մը պակասութիւններ ունին: Մենք դարերէ ի վեր պարտուեցանք, երանի թէ մենք ալ Ֆրանսացիներուն պէս սկսէինք մեր անցեալի պակասները և ներկայ մեծախօսիկութեան անդունդները գոցել:

*. Սպանիոյ ազգային ֆութպօլի Լիկան Անվէրսի Միջազգային ֆութպօլի մրցումներուն մասնակցիլ որոշած է: Ֆրանսական թերթեր խորհուրդ կուտան որ մասնակցելէ առաջ, լաւ պատրաստուին, որովհետև Սպանիոյ մէջ շատ կարեւորութիւն չըտրուիր անոր:

Կարգ մը Անգլիացի ֆութպօլիստներ թելադրած են որ «կօլ»երու թելէ ցանցի տեղ,

ուրեմն, շա՛տ բնական խաղացողներ են, թէև մեր գործին չեն գար... այդպիսիները:

* Անվէրսի Միջազգային Ողիմպիական Խաղերու Մասնախումբը, Անգլիոյ առաջարկին վրայ, ընդունած է կռիւմարտութեան մրցումը Անվէրսի Ողիմպիական խաղերուն մէջ:

Հարաւային Ափրիկէ այժմէն իսկ ընտրած է իր երկու կարող կռիւմարտիկները: Պ. Քէշիչեանի աչքը լոյս! Եթէ հայ ազգը որ եւ է միջոցս կարենայ ապահովել իրեն կզակի ոսկորները համբելու մասնագէտ... բժիշկ մը, ու ինքն ալ գտնէ անուշ ձայնով «օրօր» երգող մը, որ կարենայ իր մեղեդիներովը հետեւիլ Պ. Քէշիչին հանդերձեալ աշխարհի մէջ, հայ ազգն ալ կ'ունենայ իր «գօքսէօր»ը հիւսիսի այդ քօղաքին մէջ: Զօրացո՛ւր կզակզ կամ տկարացո՛ւր խորունկ քո՛նի... ունակութիւնդ, սլրելի Քէշիչս:

ՎԵՐՁԱՅԱՆ

Հանտօնի կենդանաբանական հիւանդանոցի օդասուն մէկ անկիւնը, մեղ անձանօթ աշխարհի մը մէջ հանգչող երջանկայիշատակ... շուներու յիշատակը յաւերժացնելու նպատակաւ յուշարձան մը կանգնուեցաւ, որուն վրայ պիտի արձանագրուեն... կացինի սխալ հարուածով մը մարդկութենէ յաւիտենագէս բաննուող մեռած կամ սասկած չունեցող անունները, ծննդեան, թաղման, եայնի թուականներովը, ու հաւանարար ժողովրդակնութեան ծարաի նորաբողբջ բանաստեղծներ իրենց տաղանդովը առաջին անգամը ըստով այդ բարձունքներուն վրայ պիտի փայլին:

Յուշարձանին հասոյթը աղքատներու շուներուն դարձանման ի պահանջել հարկին... արձանագրութեան ի նպատակ պիտի գործածուի:

Ահա՛ թէ ինչու կը պնդենք թէ... շուները մեզմէ աւելի երանելի էակներ են... մերինն պէս կապոյտ, բայց հիւսիսային երկինքի մը տակ ծնած բլլալուն համար:

Վ.Ա.ՀՐԱՄ Ա. ՓԱՓԱԶՆԱՆ.

Դեկ. 24 2-ին Թրանսայի մէջ 20րդ Bol d'or անունը կրող 24 ժամ հեծելանիւր մրցումը տեղի ունեցաւ. առաջին ելաւ Լէօն

ժոնժէ Զրդ անգամն է որ այս մրցման մէջ առաջին կ'ելլէ կարելով 924 քիլօմ. 680 մէթր երկրորդը 33 քիլօմէթր ետ ձգելով, մրցման մրցանիշ 1020 քիլ. 977 մէթր է շահուած 1899ին Վալթոսի կողմէ ժամը 42 քիլ. 540 մէթր արագութեամբ:

Գ. ՔԷՇԻՇ.

Կ. ՊՈԼՍՈՅ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԷՆ

Ց փետր 920 նիստը տեղի ունեցաւ Մր. Բրիչըրտի (Ամերիկացի ներկայացուցիչ) նախագահութեամբ, ներկայ էին ամերիկացի, անգլիացի, ֆրանսացի, հայ, յոյն եւ ռուս ներկայացուցիչներ:

Քարտուղարը, Մր. Ալֆրէտ Պէրրի, կարդաց օրակարգը, Վիճարանութիւններ տ'ղի ունեցան սկաուտական շարժումը տարածելու համար Պոլսէն դուրս գալուներն ալ եւ սակայն նկատի առնուելով պարագաներու անթոյլատու վիճակը, առ այժմ յետաձգուեցաւ, միայն որոշուեցաւ նկատի առնել զաւտէն եկած այն դիմումները միայն որ կազմակերպուած միութեան մը կողմէ կ'ըլլայ: Երկրորդ, խնդիր եղաւ սկաուտական վաճառանոց մը բանալ որմէ օգտուին միայն սկաուտները, Y. M. C. A. ներկայացուցիչը առաջարկեց իրենց շէնքէն տեղ տրամադրել այս գործին համար, որոշուեցաւ դիմել այս մասին սոյն միութեան տնօրէն Մ. Քէրիին խնդրելով որ պէտք եղած աջակցութիւնը ընէ այս մասին:

Որոշուեցաւ անմիջապէս պատրաստել միջազգային սկաուտական լամբականշան մը որ պարտին կրել ռուէ ազգի պատկանող սկաուտներ, Որոշուեցաւ Մայիսի մէջ միջազգային սկաուտական հանդէս մը սարքել, ժողովին վերջաւորութեամբ Պ. Քարտուղարը խօսքը ուղղելով ժողովականներուն ըսաւ: Չերմապէս կը խնդրուի Ձեռնէ որ Ձեր բոլոր ուժովը մասնակցիք մեր աշխատանքներուն, թ եւ է զրա որ կամ բերանացի առաջարկ կամ դիտողութիւն լրջօրէն նմատի պիտի առնուի մեր կողմէ: Աշխարհի բոլոր ազգերու վրայ սեւ ամպեր կը սաւառնին այսօր, անոնք որ կ'օգնեն եւ կը ծռնտուեն սկաուտական կազմակերպութեան, մասնակցած կ'ըլլան ամենավեհանման աշխատութեան մը:

ԺԻՐԱՅԸ

Վ Ը Ի Պ Ա Կ

Թիւ 6ի մէջ սրբագրելի էջ 86 Ա. սիւնակին տակը պէտք է աւելցնել. մեկ մասին մէջ մախու արիւն կայ, որուն զոյնը կարմիր է էջ 87. Ա. սիւնակին 17րդ տողին իբր շարունակութիւն պէտք է աւելցնել. կտրուած է: Մենք գիտենք թե՛ երակներու միջոցով